


ԲԱՃՆԵՂԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսեայ 0.85

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ցրանք
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Սմբազրութեան ցրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՍԷՆԹ.




Պ Ա Յ Ն

Հայրենեաց

ՇԱՐԱՔԱԹԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՄԵԻՆԻԱՆԻ
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՏԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second-Class Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ

Շարունակութիւն նախորդ թիւէն և վերջ

«Երբ կը յիշեմ այն հերաստութիւնը ու բազմազան սեպեկութիւնները զորս ստացայ Ամերիկեան միտնարներէն, կրկնակի գիտակցութիւն մը կուրենամ ի մասին այն պատասխանատուութեան որ ունիմ այդ բարեպաշտ ու ազնիւ ժողովուրդին (միտնարներու) կեանքը ու գործերը քննադատելու առաջադրութեան մէջ: Այս կրնամ որ ընելիք քննադատութիւններուս սխալ շարժումներ չարութի, ու հարկէ ըսել թէ, ինչ ալ որ ըսուի, պէտք է ընդունել թէ Հայ ազգին իմացական կեանքին վրայ Ամերիկայի ի գործ դրած ազդեցութիւնը արժանի է խիստ բարձր գնահատութեան:»

Այսպիսով յառաջ եկած քաղաքական ու ընկերական իրադրութիւնները հետեւեցողին վիճակը որ կը սահմանուի «Հայկական Հարց» արտոյտով: Մէկ խօսքով Հայաստանի ազգային գիտակցութիւնը արթնացած ըլլալով՝ դըպրոց ու լրագրութիւն ստացան արագ ու տիրազերական ծաւալ: Երկրաստորներ ինչպէս Թիւրքիայէն նոյնպէս Ռուսաստանէն սկսեցին արտասահման նետուիլ ուսում ստանալու և գերազանց քան զամենայն, աշխարհի շորս կողմը ցորուեալ միտնարներ հայրու մէջ ազգային միութեան գորաւոր ոգին զարթեցաւ: այս հասարակաց կարծիքը իր տեսանկի մարմնացուցաւ գտաւ ազգային

եկեղեցւոյ գիրկը: Ու ստոր նշանակութիւնը հայոց մէջ այնքան զորաւոր է որ ուրիշ դաւանանքի դարձող մը այլևս հայրենասիրակցի չհամարուիր: Այս կը ցուցնէ թէ, օտար դաւանանքի պրոպագանդայի յարողութիւնը ինչպէս անկարելի է հայոց մէջ, և թէ, ամերիկեան միտնարները — չմոռնալով իրենց արդիւնաւոր մեծագործութիւնները — Հայ ընկերական մարմնոց վրայ հերձուած մը պատճառեցին որոյ դարձանուիլը շատ դժուար է՝ եթէ ոչ անհնար: Հաւատարմացէս ճշմարիտ է թէ Հայուն ու իր ազգային եկեղեցիին մէջ եղած այս սերտ յարաբերութեան պատճառաւ այն մտաւոր ու կրօնական պարզեցումը որ ամերիկեան միտնարները կը շնորհեն բողոքական հաւատափոխներուն: չեն կրնար ընդհանուր ազգէն որդեգրուել:

Յօդուածագիրը անկէ անդին հմտաւրեց տեսութիւններ կրնէ Հայոց Ռուսաց վրայ ունեցած նախկին յոյսերուն, դէպի Թիւրքիա ռուսական արշաւանքներուն, ՅՂԻՂ. յողուածի ստեղծուելուն, և անկէ հայոց որտին մէջ ըսելի կամ յեղափոխական հաստքի կայծին վրայ: Թէ ինչպէս Հայ յեղափոխականները Հայկական նահատակութիւնով եւրոպական նպատակներ միջամտութեան կրկնապատելին ու ըստ այնմ ծրարեցին ու գործեցին: Թէ ինչպէս եւրոպացի դաւանանց իր սրբազան պարտականութեան, թէ Սուլթան տեսնելով Հայոց Եւրոպական միջամտութիւն յառաջ ընկելու ճշգրտումներն, ինչպէս զայրացաւ, մղեցնեցաւ ու յառաջ բերաւ կոտորածը:

Իր ստացած ամենահաւաստի տեղեկութեանց վրայ հիմնուելով կրէ թէ ինչպէս Սուլթանը շրջապատող պաշտօնեային Սուլթանը զարուարներ երկակայութեան մէջ պահելու՝ ինքզինքնին մեծ գործի վրայ և սուլթանին անձին զօրաւոր պաշտպանը ցուցնելու նպատակաւ՝ միշտ Հայկական ամենա անկարեւոր երեւոյթները իսկ ամենա ահաբեկի գոյներով ներկած ու ներկայացուցած են անոր վերջապէս Հայաստանի ծնողազուրկ 100,000 որբերու և Հայ ժողովուրդի ներկայ ստակալի իրականութիւնը ազիւզորմ գոյնեղով պատկերացունելէն ետքը կը հարցունէ, «Ինչ պիտի ըլլայ, ուրիշն, Հայ ազգին ապագան»: Եւ, «Այս խնդրոյն քաղաքական մասը իմ նիւթէս դուրս է. ես պիտի խօսեմ Հայ ազգի բարոյական հայեցուածներու տեսակեանքն: կրէ ու կը շարունակէ:

«Ամերիկեան ու Եւրոպացի բարերարներ անցեալ 4-5 տարիներու մէջ 3000000 տուար նպաստած են Հայերուն որով անոնց հնար եղաւ իրենց գոյութիւնը պահել կոտորածներուն և կողոպուտներուն հետեանքը եղող սովին ու աղքատութեանը մէջ: 100,000 Որբերէն մեծ մասը որ անկարագրելի կարօտութեան մատնուեցան, որ շատեր ինքզինքնին թրջաց տունը կը նետէին, անոնցմէ 50,000 ի շափ այժմ պատասպարուած են Ամերիկեան, Գերմանական ու Անգլիական բարեխիղճական հաստատութեանց մէջ ու կը դաստիարակուին իրենց ազգին օգտակար դառնալու: Այդ վախճանին հասնելու համար սակայն, երկու

պայմանք անհրաժեշտ են: Ա. Տղայքը հաւատափոխութեամբ բողոքականութեան դարձուելու չեն, այլ թողուելու են որ մնան իրենց ազգային եկեղեցիին ծոցը: Բ. Քանի որ ենթադրուած է որ տղայքը ապրին Արևելքի մէջ. անոնց անաղուած աշխարհային ուսմանց բողոր ճիւղերուն ապու է այնպիսի առաջնորդութիւն մը՝ որ ընթացաւարտները պատրաստուին Արևելեան վիճակի յարմարութիւն:

Այսու կապակցութիւնով ոտիպուած եմ տեսակ մը քննադատական գիրք բրուել թիւրքիայ մէջ իմ ամերիկացի մեծարելի բարեկամներուս գործունէութեան դէմ: Իրաւ է որ, այժմ որդուած է թոյլ տալ աշակերտներուն երթալ Լուսաւորչական եկեղեցին, սակայն դպրոցին մէջ անոնց այնպիսի դաստիարակութիւն մը կը տրուի որ անոնք իսկպէս քրիստոնէաներ կըլլան աւետարանչական իմաստով: Իայց այս նպատակը ամէն «եղ իրականացած չէ. ու ես դիտած եմ թէ, դպրոցներ կան որք այնպիսի դաստիարակութիւն մը կուտան որ թէպէտ Ամերիկայի ու Եւրոպայի տղայոց համար օգտաւէտ ու նոյն իսկ էական է, սակայն թիւրքիայ պէս երկրի մը մէջ այնպիսի տեսութիւններ և կարծիքներ յառաջ կը բերէ որք միմիայն տիրող հանգամանքներուն դէմ հակառակութիւններ յարուցանելու կը ծառայեն: Ընթերցողին գիրքին է մտածել թէ ինչու այս մասին աւելի պարզ չեմ խօսիր և կը յուսամ որ իմ խօսքերս տարակոյսի տեղի չպիտի տան ի մասին իմ ան-

ԲՍ. ՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՔՈՆՈՒԹԻՒՆ
(Շարունակութիւն նախորդ 3 թիւերէն) Գ.

Դեկ. 16 1773 ի գիշերը Պոստոնցի 50 ի շափ յեղափոխականներ հնգիկի պէս ծպտեալ նաւահանգիստը Անգլիական երկու նաւերու վրայ յարձակելով նաւաստիները կապեցին և 342 ստուռկ թէյ ծովը թափեցին, թէյի մաքսին դէմ իրենց ատելութիւնը ցոյց տալու համար, ծովափը ծածկուած էր հազարաւոր հանդիսատեսներով, բայց կառավարիչը այդ յանցաւորներու և ոչ միոյն դէմ վկայ մը կրցաւ գտնել հակառակ իր դըրամական փայլուն խոստումներուն: Այդ օրէն Ամերիկացիք հասկցան թէ միայն բռնի ու ժող պիտի կրնան պաշտպանել իրենց իրաւունքը, ուստի ամէն գիւղ մարզարան մը դարձաւ, ամէն կողմ կը զինուէին և կը մարզուէին: Նոյն ատեն կիներ. կը մեթօնէին մաքս վճարող ապրանքներ հազելի, թէյ խմել, անգլիական օրէնքներու դէմ ատելութիւնը ընդհանուր դարձնէր: 1775 ի գարնան Մասաչուսեցը պատերազմական գրութեան մէջ էր, Պոստոնի խռովութեանց անգլիացիք քանր պատիժներ դրած էին՝ աւազան-գիստը փակելով, երկրին ամէն կողմէն իրական օգնութիւն եկաւ իրենց ապ-

րուստի միջոցն զրկուած Պոստոնցոց: Բայց այդ օգնութեամբ չէին ուղեր ապրիլ հայրենասէրները: Կառավարիչը տեսաւ թէ անհրաժեշտ է երկու զինուոր խռովարարները ձերբակալել՝ Սամուէլ Ատամս և ճօն Հէնքօք, ինչպէս նաև դըրաւել Գօնքորտ հաւաքուած ռազմամբները: Ապրիլ 19 ին գիշերը դուռը մը զօրք ճամբայ ելաւ դէպի Լէքսինգթըն, բայց դեռ զօրքերը հաղիւ քիչ մը յառաջացած էին, երբ եկեղեցիներու դանակներ սկսան հնչել, ըլլուներու ծայրը բողոք փայլել երկրը կարծես կարծեցնար: Առաւօտուն կանուխ երկու բարեկամները տեղեկանալով եղելու թեանք դեռ զօրքերը չերեցած գիւղական տունէ մը դուրս ելած կը բռնէին Ֆրիստէյֆրիտ ճամբան հոն Գօնկրէսին ներկայանալու: Պայծառ արև մը կը ծագէր, հեռուէն կը լսուէին հրացաններու որոտում. առաջին օրն էր որ ամերիկացիք այդ լեզուով կը փորձէին խօսիլ իրենց բռնակալներուն հետ: «Ինչ գեղեցիկ առաւօտ» գոչեց Ատամս: Ինչ բաղդաւոր առաւօտ, այդ օրը արևուն հետ ամերիկայի ազատութիւնն ալ կը ծագէր:

Անգլիացիք առանց գործ մը կատարելու Պոստոն նահանջեցին ճանապարհին գիւղացիներու գնդերին շատ մը զոհեր տալով, քանի մը օրէն 15000 գիւղացիներ պաշարեցին քաղաքը: Յու-

նիս 17 ին այդ կամաւորները Պընքըը Հիլ լուրը գրաւեցին, Անգլիացիք երեք ան գամ յարձակելէ և շատ մը մեռաւ ու վիրաստեալ թողելէ վերջ միայն կըբացան ետ մղել ապստամբները իրենց գիրքէն: «Երկու այս տեսակ յաղթութիւն ևս, և Անգլիան ալ բանակ չունենար Ամերիկայի մէջ, ըսաւ Ցրանայի այն ատենի արտաքին գործոց նախարարը: Ամերիկացոց վրայ այդ առաջին կոխիկն ազդեցութիւնը անսահման էր, առաջին անգամ էր որ դէմ դէմի կուզային կամաւորները կանոնաւոր դրոցաց և արդիւնքը շատ նպաստաւոր էր ամերիկացոց: «Կասկած չկայ այլ ևս թէ ժողովրդին ազատութիւնը ապահով է» ըսաւ Ուօշինկթըն:

Յուլիս 2 ին Գէյմպրիոս հասաւ Բօնկրէսին ընդրած այդ հայրենասէր հրամանատարը, Ամերիկայի ազատութեան առաջին հիմնադիրը, յանձն առնելու երկար ու դառն կռիւը համամատար շատ աւելի կիրթ ու զօրաւոր բանակի մը դէմ:

Հսկայի աշխատութիւն մը կար զօրապետին առջև, անկիրթ, անկանոն, անդէն ու անպաշար ամբոս մը, ուսկից շինելու էր քաղաքական անկախութիւն ձեռք բերելու գործիքը, որքան ալ որ ընտիր լինէր պատրաստի նիւթը, նպաստաւոր աշխարհագրական գիրքը: Իր սահմանափակ միջոցներով շատ մեծ ք-

(Շարունակելի) * * *

կեղծ խոստովանութեան թէ Ամերիկեան միտնարական հաստատութիւնները, անցեալ քանի տարիներու մէջ հայ ժողովուրդի փրկութեան կարևորագոյն միջոցը հանդիսացեր են:

Վերջապէս, մոռնալու չենք թէ ազգային եկեղեցւոյ փարախին մէջ, ի մասնաւորի էջմիածին, կաթողիկոսին Աթոռը, հիմնական բարեփոխումներ ի գործ կը դրուին, նպատակ ունենալով կենսաւորել կղերական կեանքը, և պաշտօնէից աւելի խորին կրթութիւն մատակարարել: Այս իրողութեան հանդէս, մեր վրայ սրբազան պարտականութիւն մը կը դրուի որ ամէն ջանք ի գործ դնենք սերտ յարաբերութիւն մը ստեղծելու այս լուսաւորչական բարենորոգիչներու և աւետարանչական հաստատութեանց միջև: Եւ ի վեր քան զամենայն, ամէն ճիշդ թափելու ենք ցուցնելու հայ եկեղեցականին թէ, մենք հաւատալով ընելու նպատակ չունինք, և թէ մենք ուրախ պիտի ըլլանք որ անխնայար միայն հայոց ազգային ու կրօնական միութիւնը:

Քարլ Ալպերթ ֆոյ Բորպարի

Երբ ժողովուրդէն ստուար մաս մը քրիստոնէութեան կողմէն կը դառնայ, երբ բաժանորդներէն շատեր իրենց բաժնեգրները վճարելէ խոյս կուտան, երբ գործակալներ կը գտնուին որոնք ամիսներով թերթ կը ծախեն, ամբողջ զբաղուելու կուտան և վերջ ի վերջոյ իմաստը թերթեան կը դրկեն «ի՛նչ ըստ Արթիկի» թէ՛ քրիստոնէութեան մասին: (այս բարբերէն ամենէն աւելի մրցանակի արժանացեր են անցեալ տարուայ Լորէնսի, Ոթրթաուելի և Քէյպրիի գործակալները: խմբագրուած թերթը իրենց համար կաշխատէր): Այս խոստ ցաւալի ու ճնշող երկոյթները որքան որ մեր արդէն ծանրաբեռնուած ու տկար ու ժերու վրայ անախորժ ծանրութիւններ կը բարդեն, նոյն ատեն կարծես մեզի մեր գոհողութիւնները կրկնապատկելու ոգեւորութիւն մը կուտան: Կը տեսնենք ժողովուրդին բարոյական հրահրութիւնները, անոնց դարմանումին նոտրուելու առաջել վառ տենչ մը կը զգանք: Մեր ազգային ազատութիւնը ազգային նկարագիրը բարձրանալուն մէջ կը հաւատանք: ու մեր շրջանակին մէջ մեր համեստ ու ժերը այդ փրկարար վախճանին նուիրելու անոչ գիտակցութիւնը ունինք: Ահա այս պարտաւանդութիւնով ամէն ճիշդ պիտի թափենք Ձայն Հայրենացի երկար կեանք տու: Ու իրաւունք ունինք մեր այս ծանր գոհողութեանց մէջ ամէն պարտաւանդ հայրենակցի նիւթական ու բարոյական օժանդակութիւնը սպասելու: Մարդկային ընկերութեան հիմնարկութեան ի վեր այդպէս սահմանուած է պարտաւանդները իրենց բեռներուն վրայ կանեն ու կը տանին նաև անպարտաւանդներուն գետինը ձգած բեռները:

Ուստի թելեկրամի Բափորթը անցեալ օր տեսնուելէ թիւրքիստէ վերադարձող նշանաւոր անձի մը հետ, նա մերժեց թիւրքիոյ մասին որ և է բան խօսիլ: Եւ ըսեց թէ, չհրատարակուելու պայմանով, թէ՛ թիւրք կառավարութիւնը Ամերիկայի մէջ շատ մը լրտեսներ ունի, հոս անց ու դարձած բաները հոն տեղեկագրելու համար:

Ձինաստանի գործերը ամբողջ աշխարհի ունի ու ուսն կը գրաւեն: Ո՞վ գիտէ թէ զեռ ի՛նչ անհեղին անակնկալներ պահուած են Ձինաստանի մէջ աշխարհի համար: Իտալիոյ և Տրանսիսի վերայ յեղափոխութեան ամբողջ կախուած կան: Այս հանգամանքներու տակ ամէն հայու պարտականութիւնն է արտասահմանի մէջ իսկ հայ ու թիւրք խնդրոց վերաբերմամբ ամենամայրակցի գգու շուրթամբ վարուել: Մանաւանդ թիւրքիոյ մէջ որ և է տեղ հայ յեղափոխականութեան գոյնն ու նշմարանքը ունեցող որ և է երկոյթ տեղի ունենալու չէ բնաւ և բնաւ: Այս ցրնաւանքուն մէջ

ըլլալու է անշուշտ Պոլսոյ մէջ եղած ծանօթ սպանութիւնն գործադրութիւնն ալ:

Անցեալին փորձառութիւնն ու մեր խիղճն են որ մեզի այսպէս վճարէն խօսիլ կուտան:

Որ յեղափոխական կուսակցութիւն որ այս գգու շուրթանց հոկառակ վարուի, ի վերջոյ ազգին առջև խոստ ահաւոր պատասխանատուութեանց տակ կը ձգէ, ու տեղի կուտայ խորհուրդութիւնը մէջ թշնամի մաս կար: Ահա կը ու վտանգալի օրերու մէջ ենք: առաւել քան երբէք ծայրահեղ գգու շուրթանց ժամանակն է:

Նիւ-Եորքի մեր դրացի թերթը իր նախորդ թիւոյն մէջ Ձայն Հայրենացէն կոչուած մը ըրած էր: որուն մէջ գրաւարական վերաբերում մը (թերեւ), երբ քերականական խոշոր սխալներ գործուել են էին, որը կարողացողները մեզի պիտի վերագրեն անուշտ: Այս բանին յիշեալ խմբագրութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք:

Սակայն նոյն ատեն կը տեսնենք որ եթէ այդ նախադասութիւններուն վրայ յիշեալ փոփոխութիւնը կատարուած չըլլար, անկէ այն միտքը չէր իլլեր՝ ի՛նչ որ հանած էր Պ. Վաւառան: Մեր խօսքով ժողովուրդը չէր որ պիտի նախատուէր իր վրայ տարածուած խաւարին համար, ալ անոնք որոնք կը տարածէին այդ խաւարը: Մեր խօսքով ժողովուրդին կարողականն ու ո՛չ թէ ներգործական դիրքը արուած էր: Ի՛նչու այդ սխալը գործուէր. չենք հասկնար:

ՍԳՆԱՆՆԵՍ Ի ԾԻՔԱԿՈ

Յունիս 28 ին զեղեցիկ ու տպաւորիչ Ազահուգէս մը ունեցանք ի յիշատակ Անմահ Աւետիսեանի ու իր հարիւրակուր նահատակ ընկերներու:

Նորմանիա ժողովարանը լեցուած էր Եթեակոյի հայ գաղութի գրեթէ ամբողջութեամբ:

Ներկայացուցեալ նախ «Արեւնոտ Հաց» ողբերգութիւն. կոտորածի կեանքէն ճշգրիտ պատկեր մը. հեղինակութիւն Վ. Շահէնի: Դերին մասնակցեցան հայ տիկին մը ու հայ օրիորդ մը, որ վտառակութեամբ կրնամ ըսել թէ մեր գաղութի մէջ առաջին երկոյթն է: Տիկին մարթա Յակոբեան հրահրի կերպով կատարեց, Կուրտ Գրիգորի գերբ և իր գրաւիչ ձայնով օրօրոցի կշտին երգած «Օրօրով հմայեց հանդիսականները, Դերեկատարները յաջող էին. Գրիգորի՛ Գ. Թաշեան, և քերտ հասանի Յ. Գոյատեան դերերը աչքի կիշային բնականութեամբ: Արեւնոտ հանդերձները իրականութիւն կուտային հանդիսին: Ինկալեան հուրի բոցեր ու վեց հարուածեաններու օրտուտները ճշգրիտ կոտորած ու հրդեհ կը պատկերէին: Շատեօրու աչքուն մէջ արցունք կար: Ծափահարութիւնները քանիցս վարագոյրը բարձրացնել տուին:

Ներկայացուածին յետոյ սզահանդէսի Բ. մասը սկսաւ: Վարագոյրը բարձրացաւ: Բեմը զարդարուած էր Անմահ Աւետիսեանի ձեռնարկով մեծադիր պատկերով, ոսկեցօծ շրջանակի ու սև ժապակեաներու մէջ պարուրուած: Հանդիսին առնական Պ. Վ. Շահէնի օրուան սզահանդէսի նշանակութիւնը բացատրեց:

Ատենախօսեցիկն պարոնայք Մ. Բարակեամբուրեան, Յ. Ռուսեան, Պետրոս Յակոբեան և Պ. Կիօլճիկեան: Ամենքն ալ վեր հանեցին Աւետիսեանի նշանակութիւնը, ամենքն ալ իրենց հիացումը արտայայտեցին անմահ հերոսի կատարած դերին ու անոր կենդանագրի առաջ գլուխ խոնարհած ու խոսեցին անոր բարձրացուցած գաղափարական դրօշակին հաւատարմի մնալ: Մերովը Յակոբեան, 3 տարեկան դպրոցական աշակերտ մը անմահ գերարտական ձիրքերով օժտուած էր այդ աղեկ մը, հիանալի կերպով արտասանեց Արեւնոտէն ոյն հառաչանքը: Օր Տիգրանուհի Թաշեան, տպաւորիչ փափուկութեամբ մը արտասանեց

բանաստեղծութիւն մը «Կոչ 1900 ի դար նան»: Ուրիշ արտասանութիւն մը ըրաւ Վ. Թաշեան: Եթեակոյի երիտասարդ երգիչ Պ. Հրանդ Ասատուրեան կրթուած ու լիք ձայնով երգեց Մայր Արաքսին, Ո՛հ ի՛նչ անուշ, ի Բիւր ձայնից և ուրիշ ամերիկեան ազգային երգ մը: Պ. Վ. Թաշեան Հայկական նուագի վրայ նուագեց: Հանդիսին տպաւորութիւնը շարաթիւնը խոսակցութեան նիւթ եղած է մեր գաղութին:

ԱՆ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Այլիմէն կը գրուի թէ Պոլսեցի կարպետ Գաւիթեան անուն անձը անձնապանութեան համար թոյն կերած է եղեր: Տան տիկինը սենեակը մաքրելու համար երբ ներս կը մտնէ, երիտասարդը մեռնելու վիճակին մէջ կը գտնէ: Կին լօր կը զրկէ հիւանդանոցը ուրկէ կտոք կուգայ և հայր մահամերձ վիճակի մէջ հիւանդանոց կը տարուի: Բժիշկները յոյս ունին թէ պիտի ապրի մարդը:

Ուստի Սէյվիկ պանթի մէջ Ամերիկացի յաճախորդ աղջիկ մը գետնից ձգուած 50 տարւի ծրար մը կը գտնէ, և քովի ամերիկացի մարդուն կերկնցունէ հարցունելով թէ «քու կոչ է այն»: Մարդը ոչ իմս չէ կը պատասխանէ: Հոտ հայ մը գտնուի: Կը տեսնէ որ դրամը ձեռքէ ձեռք կը տրուի, ու ոչ մէկը տէր կըլլայ: Հայուն ըսմամբ թերեւ ի՞նչ կըրտնէ: Այդ դրամը իմս է՝ կըրտնէ ու կանուէ: Յաջորդ օրը դրամին տէրը կուգայ եւ դրամատան քարտուղարին կըլայտնէ թէ ինք անցած օրը 50 տարւ գտած էր հոն: Պաշտօնեայն տեսած էր թէ այդ դրամը հայ մը առաւ որուն քով ուրիշ ծանօթ հայ մը կար, ուստի Եթեակոյ կը դրկուի դրամը առնող հայը գատարան կը տարուի և վեց ամիս բանտարկութեան կը դատապարտուի. ձեռքէն 50 տարւը անհեյն գատ:

Նիւ Օրլիանի մէջ սե մը ձերբակալուած խոյս ապու համար երկու փոխ գնդակահար սպանեց. և փրկաւ տան մէջ մայրապետանեցաւ: Ուրիշ փոխաններ եկան տունը պաշարեցին: Սե ձերբակալու փորձերու մէջ 6 հոգի սպանուեցան և շատեր վիրաւորուեցան մարդատան սե յարձակած գնդակներէն: Վերջապէս տանը կրակ տրուեցաւ ուրկէ ուրիշ երկու սե զուրս ելան որոցմէ մին ձերբակալուեցաւ և միւսը գնդակահար եղաւ: Տուր ամբողջ բոցիւրով պատած էր, սե ոճրագործին հոն կենալ ալ անկարելի էր, դուրս նետուեցաւ փախչելու փորձով: Իրեն վրայ տեղացող գնդակներուն տակ գետնը տապալեցաւ մեռած:

Ժողովուրդը այնքան զրգուած է սե ձերբակալու որ կը վախցուի թէ քաղաքը գտնուի: Գլխով կենալ արգելի սե ձերբակալու մը տալ է:

Ուրիշ ամենուով Ամերիկացի երիտասարդ մը երկու ընկերներով Մեքսիքո ներսերը Հնդիկ անկախ նահանգ մը գնաց ոսկիի երկու հանքեր բանեցունելու: Հոն հնդիկ գեղուհի մը սիրահարեցաւ: Օր մը անտանը գացեր էին շրջապայելու այդ օրիորդին հետ: Չարձին հնդիկները տեսան անոնց միասին անտանէն գալը. աղջիկը հարցաքննելով իրենց առած կակաւածը հաստատեցին. ու միւս օրը իրենց ցեղապետներուն առջև դատուելու քաշեցին Ուրիշամը: Վճուռեցաւ թէ նա ուղարկի արտու մը բերածէ իրենց ցեղին, ուստի ամենախիստ մահու համար պէտք է մեռցուէր:

Ուրիշամը տարին մերկացուցին և կարմիր մըլիւններու բոյնի բրակէն 10 քալ հեռին գետինը պառկեցուցին ձեռքերը և ոտքերը ցիցերու կապուած: Երկու րոպէ ետքը մըլիւններու բլուրէն կարմիր հոտանք մը սկսեց քալել դէպի ողորմելի հոտ: Մըլիւններու գունդերն էին: սկսեցին Ուրիշամին ոտքէն ի վեր կրծել: Խնդ մարդը կաղաչէր, բայց ո՞վ կրնար օգնութեան հասնիլ: Ընկերները անկարող սպանաւաններ էին, Ուրիշա-

մին «սիրուհին» կարծես գոհուեալու: Թիւն կզգար անոր տանջանքը տեսնելով և բարբարոսները վրէժանութեան գոհացումէն կը հրճուէին:

Միւս առաւօտ Ուրիշամի ընկերները գացին և գտան անոր ճերմակ կմախքը մորթէ ու մտէ յամենայնի մաքրուած, զոր տարին և թաղեցին:

Փեթրապուրկէն կը հեռագրուի թէ, Չոր. Բիպաս, կայսերական բանակէն, մինչ իւր տիկնոջ հետ նստած էր պարտիզին մէջ. տեղապահ մը եկաւ, զինուորական բարեւ տուաւ, և վեց հարուածեանը քաշելով կրակեց. գնդակը զորպետին ալ կուրծքէն անցաւ և գայն գետին տապալեց:

Աւստրիական բանակին մէջ կարգապահութեան անտանելի խստութեան շատ զինուորներ անձնապանութիւն կը գործեն:

Վերջին գորահանգիսին մէջ երբ կայսրը զօրաց առջեւէն կանցնէր, զինուոր մը ինքզինք իր սուրին վրայ ձգեց. որուն ծայրը իր քանակէն դուրս ելաւ ու այսպէս կայսր աչքերուն առջև արիւն-թաթաւ ինկաւ:

Ամերիկացի զինուորական բարձր պաշտօնեայ մը Սպանիական, Ափրիկեան ու ներկայ Արեւելեան պատերազմներու ճակատամարտները քննութեան առնելով տեսած է թէ արձակուած գնդակներուն 20,000 էն մէկ հատը միայն մարդ կըսպանեն: ըսել է պատերազմի մէջ մարդ մը սպաննելու համար իր վիրաւորը (166 փոստ) կապար և 3000 կշիռուած վառօք գործածելու է. արդ հաշիւը ըրէք թէ Չորեանց 950,600 ի բանակը ջնջելու համար սրբան գնդակ արձակուելու. ո՞րքան վաւառօք ու կապար վատնուելու է:

Անգլիոյ Թագուհին երկրորդ որդին Սաքսօպուրկի դուստրը կոկորդին մէջ քաղցկեղով մեռած է:

Ուստի մէջ 15 տարեկան հայ օրիորդ մը հայ երիտասարդի մը հետ համաձայնութեամբ փախչեր է և գացեր ամենուրեք են:

Կենաց ապահովագրական ընկերութիւնները վերջին տարիներու մանաւանդ այս վերջին ամիսներու մէջ վեհակենտրոն կեանքը ապահովագրելու համար սովորականէն աւելի վճարում կը պահանջին՝ ըսելով թէ անոնց կեանքը շատ աւելի վտանգի տակ է: Ուստի թագաւորի մահուամբ կենաց ապահովագրական ընկերութիւնները խոստ ծանր կորուստ ունեցան, որուն կեանքի ապահովագրութեան ամբողջ գումարը գանազան ընկերութիւններու մէջ 7,000,000 տարւ է:

M. HARPOOTLIAN, Worcester, Mass
P. O. Box 470, Սեյվիկ-Որ ՓՈՅ ԳՐՈՑ
Տաճկաստանի բոլոր քաղաքներն դրամ կը փոխադրենք: Մեր տան կեղրոնա-տեղիք են Կ. Պոլիս ու Պարբերք մեծ: Յարութիւն է քի. Պարբերքի տան և եղարթ մեծ գումարով փոխ գիր առնողներուն մանաւոր գեղը կընենք: Ամէն գծի վերայ նաւային սոսմակ կուտանք. սոսմակ ու դրամ հեռագրով կը զրկենք Մարտի 1 Մեր խանութի հասցէն է 57 Hanover Street. Միւրան Պարբերութեան Ուստր

ՆԱՄՈՒ ԶԱՃԻՆԷՆ

Հաճին ամբողջ թիւրքի մէջ ամե- նէն աւելի կարօտ տեղերէ մին է:

200 որբերէն զատ զորս կը խնա մենք, ստիպուած ենք հոգ տանիլ նաև բազմաթիւ այրի կիներու որոնք սպրե- լու ոչ մի միջոց ոչ իսկ փարս մը ու- նին:

Մեր հոս գործի սկսելէն ի վեր ճիգ թափեր ենք ամենէն աւելի կարօտե- լուն գործ հայթայթելու և ըստ այնմ անոնց օգնելու:

Որորհետև ամառ է միզմէ նպատակ ընդունողներուն թիւը պիտի պակսեցը- նենք: Կը զարմանաք անուշադաս Պատեա- ռը ըսեմ: Նախ ցուրտ չէ: վառելիք չու- նենանուն համար չեն սառել: Երկրորդ թէ և տարակուսելի, սակայն հաւանա- կան է որ երկու շաբթուան մէջ տեղմը մէկ աւուր գործ գտնեն և ասով ճարեն յիսուն կամ վաթսուէ փարս, կամ թէ ուսանք փոքրիկ պարտէջներ ունենայով կարող կըլլան անկէ քիչ մը բան արտա- դրել: վերջին ամենէն գերազանց պատ- ճառն այն է որ մեզի դրկուած զբաւնե- րը սկսած են նուազիլ:

Ըսենք թէ ինչ օրավարձ կը վճա- րենք, 90 փարս լուացարարի, 65 փարս կարողի, 75 փարս ղուր կրողի: Ըսող մարքելու կամ զգելու համար 30-40 փա- րայ: Ես սպիտի խղճաք ստոնց վրայ, սակայն ասոնք տեղւոյն համար խիստ լաւ օր-վարձեր են: պիտի զարմանաք եթէ ըսեմ թէ միտիոնար մը մեզ կը մ զադրէր այդքան շատ վճարելուս համար:

Երկուշաբթի առաւօտ է: Ըստ սովոր- ականին կոյր ու խնդանդամ այրի կի- ներ և մեծցած որբեր դրան առջև խնու- նուեր են ստանալու իրենց բաժին բուր- զը որ մանեն: Ու մենք ինկած ենք խիստ նեղ դրութեան մէջ, անոնցմէ մի- այն 15 կարօտադոյնները պիտի զատենք ու մնացեալները ունայնաձեռն ու զլիւի- կոր են պիտի որկենք:

Կանչեցինք անուն մը և հարցուցինք «Տուն ունի՞ս»: Կոյր խղճալի կին մը՝ գաւազանին վրայ կռթնելով դժուարաւ ոտքի վրայ կայնեցաւ և պատասխանեց «ոչ, չունիմ»: Ո՞ր կը բնակիս:— Դըրա- ցին մէջը արտօնած է զիս որ իրենց ա- խոտին մէջ անկիւնը պահիր: «Որքի չունի՞ս»:— «Որքի մը» ունիմ 2 տարե- կան աղջիկ մը և տարեկան և 8 տարեկան զաւակս ձեր դրանոցին մէջ է: Այդի կամ պարտէջ չունիմ:— Ոչ, որ և է բան մը չունիմ: Բանի որ բան մը չունիս, մեր գալէն առաջ ինչով կ'պարէիր:— Ինչ որ մուրալով դարցնեմք կը ձարէի: Ու ոտքերիս ինչով սկսեց աղաղակել «Աստուծոյ սիրոյն! ինձի գործ տուէք»: Ու 10-12 հոգի կը վկայեն թէ կը ճանչ- նան զայն, ըսածները ճշմարիտ են:

Ուրիշ պատահի մը կը հարցունենք, «Որքի չունի՞ս որ քեզ հոգայ»: Կը պա- տասխանէ, «երկու կտրիճներ ունէի, կո- տորածին ատենը սպաննուեցան»:

Հասած աղջկան մը անունը կը կան- չենք, գրէթէ կոյր է: (Հաճինի մէջ կոյ- րեր բազմաթիւ են): Բարեկամ չունի որբ է, որ և է հոգացող չունի:

Ու մեր ցուրտ հարցումները կը շա- րունակուին այդ վէրքերով լի թշուառ- ներու շարքին վրայէն: Որք՝ պատմմ ու որք՝ նկարագրմ: Եւ կը խոստանաք ու անոնց շատին «Գործ չունիք» ըսե- լով կը զրկենք պարսպ ձեռքով, որոց սրտեք սակայն լեցուն են խոցերով, հուսալանջներով, ցաւերով...:

Այսպէս ահա կը նկարագրէ Հաճինի որբերուն և այրի կիներուն վիճակը Օր- օրով կամ պարթ, որ տարի մը առաջ ըն- կերակրի մը հետ ասկէ գնաց Ամերիկայէն ըստանալիք նպատակներով Հաճինի որբերը խնամելու:

ԸՆՏԱՆԻ ՅԱՐԿԸ

Սիրելի տեր!

Ձեր հրաւերին վերջնական պատաս- խան է կէս դրական կէս բացասակոն: Գեղեցիկ սեռիս օգտակար լինելու փա- փաքս վրա է: սակայն օգտակար կարե- նալ հանդիսանալուս հաւատքը չպիտար իսկ, ուստի ձեր հաւատքին լոյսովը պիտի ջանամ իմ փափաքս իրագործման

ճամբուն մէջ գնել: Ընտանեկան կենաց շուրջն դարձող խնդրոց վրայ գրական փորձեր կատարելով ու ձեռքի զրկելով: «Չ թէ անուշադաս հրատարակելու համար այդ պարագան ձեր բացարձակ դատող- ութեանը կը ձգեմ»:

ԸՆՏԱՆԻ ՅԱՐԿԸ: այդ պիտի ըլլայ զրեւիթներու բուն վերտառութիւնը:

Փափուկ սեւը որ բաճին ու բրինձին բացած փոսերուն մէջ և մանգաղին պո- կեցուցած խուրձերուն տակ իր քրտին- քը կը խառնէ արի-մարդուն քրտանց հետ, որ պատերազմի դաշտը թնթա- նօթներու բոցին, ծուխին, որոտումնե- րուն ու սուրբերուն տակ կընկերանայ զինուորին: Արայիզին նման սիրոյ եւ գիտութեան բոցերով համակուած վի- բաւորանալը զգուանքով դուրգու- րանքով կը պատէ: Կը դարմանէ զա- նոնք՝ հրեշտակի գեղեցու թիւն մը տա- րածելով իր ջորս դին, կընդունի միջ հայ գեղանի սեւը դուրս մնալու չէ գը- րական սպառիչէն ալ: ուր մտքի ու բարքի մշակութեան գործը շատ աւելի կենսական: անհրաժեշտ ու նուիրական է ուր քննադատութիւնը թէ և պատերազ- մէն խիստ առաւել անողոք է, (ուր անձ- նագործութիւնը թշնամութեան բոցե- րուն մէջ կողջակիզի, ոչերն ու ուրն գի- րար կը գրկեն՝ որոցմէ երկու կողմէն գետնիք տարածուած նահատակ դիակ- ներու վրայ փայլակէ պսակներ կը թա- փին— լոյսն ու արհաւիրքը, յոյսն ու մահը—) սակայն անկէ է այդ ժամա- ղըրազայրէն որ մարդիկ՝ իր միակ կա- մուրջէ՝ կանցնին ճշմարտութեան, ա- զատութեան և բարեկեցութեան սահ- մանները: Մարդութեան վերապայտու- մին մէջ եթէ արի-մարդը ա՞յ՛ փափուկ մարդն ալ ձայն թնէ է: Թուշուր մէկ թևով չկրնար թռչիլ, երկուքը միասին գործելու: միասին շարժելու: միասին թափ տալու են: Եւ ահա կը վերանայ տունը, ընտանիքը, ընկերութիւնը, ժո- ղովուրդը, ազգը, մարդկութիւնը, աշ- խարհը:

Գրագիտուհի մը չեմ: շատ բան կը գ- դամ, շատ բան ալ փորձառութեանէն գի- տեմ: սակայն ինչքան դժուար է գանոնք յաղողի արտայայտելը, Երբ զգացում ներքէ կ'ալէկորին: անոնք ալիքներու մէջ կը տատանին ու կը խորատուգրին արտա- յայտութեան ձևով խոսցած խորհուրդ ներք, որոնք նախ մը պէս նաւահան- զիստ մը կը փնտռէին ինքզինքնին ձգե- լու: արտայայտելու կարողութիւնը որ- քան զօրաւոր է, անոնց մէջ ամփոփու- ած խորհուրդներուն ծովզգրն հանե- լուն ալ նոյն համեմատութեամբ սպա- հովութիւն կայ: իմ գրական կարողու- թիւնս տկար է: բայց տկար նաւերուն ալ շատ անգամ կը յաղողուի նաւահան- զիստ հանելի: Պիտի փորձեմ:

Նազելի Պատկան

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒՆԻԿ

Ձէյթունէն և իր շրջականերն եկած լուրերը սրասմմիկ են: Ժողովուրդը հայ չունի: խոտի, թխափի վրայ կ'ապրի: Թիւնուոր սուեկ ևն: կուտեն և շատեր կը մեռնին:

Թնթանօթներու առջև գլուխ չխո- նարհող ժողովուրդը անօթութեան ճան- կերուն տակ ինկած ու ժապասա կը քաշ- կատուի և մահուան դուռը կը տարուի: Տիգրանակերտ անօթութիւն, վան անօթութիւն, Հաճին անօթութիւն, Ձէյթուն ևն անօթութիւն:

ՆՈՐ-ԿԵՆՏԻՆ ՄԷՋ ՀԵՏԻՆԻԱԼՆԵՐՆ

ԿԸԿԱՐԳԱՆԻ

ԻՉՄԻՐԸԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ: Նո- րանոր տեղեկութիւնները կը հաւաստեն թէ նախորդ Պատրիարքին առողջական վիճակը հետզհետէ աւելի կը վատթա- րանայ: Երուսաղէմի վանքին մէջ բո- լորովին երեսի վրայ մնացած լքեալ է: Միանգամայն ներթափան կացութիւնն ալ շատ խեղճ է: Այս ամենատուրջ տե- յեկութեանց վրայ ու է խորհրդածու- թիւն աւելցնելու պէտք չենք զգար- ամէն հայ իր պարտականութիւնը թող իր խղճին հարցնէ:

Կ. Պոլսէն յունիս 7 թուականով թայ- մըզին կը հեռագրուի թէ սուլթանը Հա- մէպի կուսակալ անուանած է Տիարպէ- քի ինտրոք կուսակալ էնիս փաշան: Նոր վալին յունիս 6 ին գաղտագողի Պոլ- սէն մեկնէրէ դէպի հալէպ, և իր ա- նուանումը պիտի հրատարակուի պաշտո- նատեղին հասնելէն յետոյ: Էնիս փաշա 1895 ին Տիարպէքի կտորածը կազմա- կերպեց և գործադրեց այնպիսի վայրա- գութեամբ մը զոր սուլթանը իսկ չէր յուսար: Պետութեանց բողոքին վրայ այդ մարզակերպ գազանը պաշտօնակե- եցաւ, ու սուլթանը մինչև հիմա չէր համարձակած ու և է տեղ մը էնիսը կու- սակալ անուանել: Օգտուելով պետու- թեանց Չինաստան ունեցած զբաղումէն սուլթանը անմիջապէս՝ Պոլսի կիսի կը գրկէ այդ ոճրագործը: Իսայ դեռ պանական ըլլալով գործը կենսագրելով չէ ու- զած այդ լուրին տարածումը, մինչև և որ վալին տեղը հասնի:

Յուլիս 7 շաբաթ օր Պոլիս 100 Հայ ձերբակալուէր են: ասոնցմէ ոմանք եր- կիրին աքսորուեր, ուրիշներ ալ բան- տարկուեր են: Թայմզի թղթակիցը այս նոր խտուութիւնը հեռագրելով զայն կը վե- րագրէ Երեսուցի-թիւրքերուն կողմէ գեապանատունները յանձնուած յայտա- բարութեան գործին: Յայտնի է թէ այդ յայտարարութեան ոչ հեղինակները յայտ նուեցան, ոչ ալ զայն դեռ պանակուե- ները տանողները գտնուեցան: Թէ սուլ- թանը և թէ լրտեսական խուճը կը մը- տածեն թէ Հայերը միայն կարող են այդքան գաղտնապահութեամբ գործ մը տեսնել, ուստի Հայոց վրայ կասկածե- լու պէտք կ'զգան: Իսկ Երեսուցիները թի- րեքէն ոմանք ալ կը ծանուցանեն թէ երկու հայ յեղափոխականի Պոլիս մտած ըլլալ և տեղեկութիւն մը առնուած ըլ- լալով ձերբակալութիւններ վերակսեր են:

Կ. Պոլսէն յունիս 11 թուականով կը հեռագրուի թէ Իսուսիոյ դեսպանը նոր ծանուցագրով մը Դոնէն պահանջէր է 3000 Հայոց համար թիւրքի վերադառ- նալու անմիջական թոյլտուութիւն: Ասոնք չեն պատկանիլ երկր 40,000 գաղթա- կաններու, այլ առևտուրով զբաղողներ են որոնք օրինաւոր անցագիր ալ ու- նին:

Լորէնսէն Պր. Տիրան կը գրէ թէ, տեղւոյն որբախնամ ընկերութիւնը ընդ- հանուր ժողով գումարած ու յաջորդ տարուան իր գործունէութեանը հարկա- ւոր կարգադրութիւնները բրած է:

Տեսնուերէ թէ իր հիմնուած օրէն, որ է 1900 Մարտ 1: մինչև Յուլիս 15 \$ 89,95 սէնթ գումար հասցի ունեցեր է: Որոշուերէ երկու օրը որբագրելի վա- րագայ վանքին մէջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Իտալիոյ ՈՒՍՊԵՐԹ Թագաւորն ալ անիլիանականի գնդապիւն զոհ գնաց: Թագաւորը մարդկան խաղերու մրցանակաբաշխութեան հսկիչն ետք պալատ վերադառնալու համար կառքը նստելու վրայ էր, ժողովուրդը խան, ս վառութեամբ զինքը կողջուէր և ինք ժողովուրդին առջև գլուխը ծնելով ու ժպիտներ արձակելով փոխադարձաբար կողջուէր զանոնք: և ահա մարդ մը մօտ եկաւ Թագաւորին և վեց կարուածեանի երեք գնդակներ արձակեց որոց երեքն ալ դպչեցան ու մին ուղղակի սրտէն անցաւ:

Ումպերթ Թագաւորին յաջորդեց իր մէկ հատիկ որբին վիքթօր Էմմանուէլ Նախօրի իշխանը:

Ումպերթ Իտալիոյ երկրորդ Թագա- ւորն է: և կը վերաբերի Սալօի տան: Ումպերթի Հայրն էր վիքթօր Էմմանու- էլ, որ Իտալական անկախութիւնը ձեռք բերաւ Աւստրիոյ դէմ պատերազմելով ու անոր առաջին Թագաւորը եղաւ:

Ումպերթ Թագաւոր ինքն ալ մաս- նակցած էր Իտալական անկախութեան կռիւներուն և քաջագործութիւնները Ը-

րած: Երբ անգամ մը վտանգաւոր տե- ղի մը մէջ յառաջ կը նետուէր, զօրա- պետ մը օնութեան հասաւ: որուն ըսաւ Ումպերթ իշխանը, Յաւիտեան չպիտի ներեմ քեզի որ զիս չթողուցիր որ մի- նակ դուրս գայի առաջադրութեան մե- ջէն: Երբ Ումպերթ իշխանը զօրապե- տութեան աստիճանին բարձրացաւ մեր- ժեց: րսելով թէ «Երկրին պիւտեմէն ար- դէն ծանր է, չեմ ուզեր որ իմ պատճա- առաւ ալ անոր վրայ յաւելում ըլլայ»:

Երբ Թագաւորանք Ումպերթ իր հօ- րը գահը բարձրացաւ: տեսաւ թէ հօ- րը ահաբեկ պարտքերը կան: Ազգային ժողովը որոշեց որ կառավարութեան գանձէն վճարուին անոնք: սակայն Ում- պերթ Թագաւորը մերժեց այդ շնորհ- քը ու որոշեց ինքն անձամբ վճարել զանոնք: Միայն իր հօրը թողուցած կալուածներէն, պալատներէն մաս մը: Ժախեց շատ մը թանկագին իրեցէններ, ձիեր, պակսեցուց իր ծախքերը ասկէ ու անկէ: մինչև բոլոր պարտքերը հա- տոյց ու կարեւոր գումար մը աւելցուց բարեսիրական ձեռնարկներու մասնակ- ցելով ուրիշներուն օրինակ սկսաւ:

Կըսուի թէ Ումպերթ Թագաւոր մեծ գիւնանալէս մը չէր: սակայն մեծ էր անոր սրտին արիւթիւնը, ացնու- ութիւնը և բարութիւնը:

Սալօի տան նշանաբանն է թէ. «վա- խը և Սալօ երբէք իրարու հանդիպած չեն»:

Արքայասպանին անունն Անճէօ Որ- քէպի: Փեթրոն կը բնակէր և մետաքսի գործարան կաշխատի եղբը: Առուսա- ցած է երկու տարեկան զաւակ մը ունի: Ամերիկայի անիլիանականներուն կեդրո- նը Փեթրոնը կը համարուի: յիշեալ ան- իլիանականը անկէ որոշուած ու զըր- կուած էր Ումպերթ Թագաւորը սպան- նելու:

Փարիզի ոստիկանութիւնը կըսէ թէ շատոնց գիտէին թէ անիլիանականները որոշեր էին Ումպերթ Թագաւորը և ու- լիչ չորս վեհագետներ սպաննել:

Արքայասպանը անմիջապէս ձերբա- կալուած է: Ժողովուրդը յարձակեր էր վրան սպաննելու: ձեռքերը արկնուտեր ու հանդերձները պատուտեր են: սակայն ոստիկանութիւնը անմիջապէս զայն մո- լեզնած ժողովուրդի ճանկէն յափշտա- կել ու բանտ տանիլ յաջողած է:

Իտալիոյ ներկան մթապատ է: ոչ ոք կրնայ ըսել թէ ինչ պիտի լինի ապա- գան:

Գերմանիոյ կայսրը Չինաստան գա- ցող զօրքերուն ատենախօսելով զանոնք հրահանգած է որ չինացիները շարքին անխնայ ու հետեւեալ խօսքերով վերջա- ցուցած է:

«Երբ թշնամիին դէմ կեւլէք, յիշեցէք զայս, — խնայեցէք ոչ ոքի, անձնատուր մի առնէք, ձեր գէնքերը այնպէս գոր- ծածեցէք որ մինչև հազար տարի Չի- նաստան չհամարձակի որ և է Գերմանա- ցիի մը երեսին նայելու»:

Պոլսէն Լօնտօն Սթանտարտին կը հե- աագրուի թէ Սուլթանը այնքան հոգա- ծուէ Ուիլհէլմ կայսրը հաճեցունելու, որ շինուելիք 6 մարտանաւերը զինելու համար Արմսթրօնկին, (Անգլիական տան) առաջարկած վար զիններ անկատ թող- լով՝ պատուիրեր է որ գնումները կա- տարուին Գրուփի գործարանէն:

Պարսից Եսկը Եւրոպա պտոյտի ելած է: Նախ Փեթրոպոլիս այցելեց ու Զա- րը կայարանը երթալով դիմաւորեց զին- քը և մեծ պատիւներով ու ժողովրդեան զեցեցէններու գոռու գոչումներովը ա- ռաջնորդուեցաւ կայսերական պալատը:

Եսկը հիմա Փարիզ է: Հոն ալ Զը- րանսախ նախագահը կայարան երթալով դիմաւորեց և առաջնորդեց զինքը նա- խագահական պալատը:

ՊՅԵՐՆԵՐԸ

Մարաշախ Բօպերթս կրկին սկսած է շարժիլ երկար անշարժութենէ մը ետ քը: Նուազ գործունէութիւն չեն ցուց- ներ նաև Պօէրները որոնք Անգլիական բանակին բաւական նեղութիւններ տա- լէ զատ մի քանի փոքրիկ յաջողու- թիւններ ալ ունեցան:

Մարտի 1-ին Լոնտոն յղած վերջին ու կարևորագույն լուրն այն է թէ Պոլսի գորական Փրինչյո 5000 շինուորներով անձնատուր եղած է Չոր- շնթըրին անպայման կերպով:

Չոր. Տուէթ Օրէնճցիներուն ընդհանուր հրամանատարն ալ շատ նեղ դըրութեան մէջ է. անձնատուր թիւն առաջարկեց միակ պայմանաւ որ իմ մարդոցը թոյլ տրուի իրենց տեղերը երթալու. սակայն մարտի 1-ին անպայման անձնատուր թիւն միայն կը պահանջէ:

Մեքսիկոյի հերոսը. Չոր. Պատէն Փաւրը հիմա նորէն պաշարման մէջ ինկերէ Բըսթընի մաս. իրեն օգնութեան գի մող զօրքը սկսած էր բարեփոխմամբ պաշարողներուն ու եւ մղուեցան:

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինաստանէն կրկին դեպքաններու ողջութեանը լուրը կուգայ. այս անգամ կառավարութիւնները սակաւ վարանմունքով կը հաւատան. փեքիսի ունգիլիական դեպքան սոր Մաքսոնայա և ուրիշ գեղացիները ալ իր քաղաքները իր առաջին գաղտնագրութիւնովն զբաւ են դրկուած լուրերը: Սըր Մաքսոնայա յըզած լուրին համաձայն մինչև Յուլի 26 դեպքանները ողջ են. պատերազմի մէջ իրենց կողմանէ 80 հոգի մեռեր է ու ամբողջ զինագումարը բրած են երկու կողմէ:

Կրտսի թէ Չինաց կառավարութիւնը դեպքանները իր պատանդ պիտի պահէ. անոնցով Եւրոպական պետութեանց սպառնալիք պիտի կարգան. եթէ միջազգային բանակը սկսի փեքիսի վըրջ ք. ինչ. այն ատեն Չինաց կառավարութիւնը դեպքանները ու բոլոր օտարականները պիտի յանձնէ վստաղ Պօքսերներուն որ ուղարկուեն պէս տանջեն և սպաննեն զանոնք:

Անգլիական կառավարութիւնը Փարլամէնթին առջև դրած Չինաց կայսեր կողմանէ թագուհի կայսրուհոյն զըրկուած նամակը. որոյ մէջ յիշատակելի վերջ թէ ինչպէս Չինաստանի օտար առևտուրին հարկերն ետքանաւոր Մեծ Բրիտանիան է. թէ տեղական վաճառականները ինչպէս անգլիացի վաճառականներուն վրայ իր ընկերներու կը նային. կը հայցէ պաշտատաքին որ անգլիական կառավարութիւնը Չինաստանի թեր ելլէ ու պաշտպանէ զայն այս փորձանքի և վտանգի օրերուն մէջ ոտնձգութիւններու դէմ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

Իր թէ ալ Հաստատագրուող կըստուգուի թէ դեպքանները փեքիսի մէջ ողջ են:

Լոնտոն թայմսը իր փեքիսի թղթակցին նամակ մը ստացած է որը նոյնպէս կը հաստատէ դեպքաններու ողջութիւնը և մեղադրանք կը բարդէ Չինական կառավարութեան վրայ իր մեղսակից Պօքսերներու:

Միջազգային բանակը սկսած է քայլի դեպի փեքիսի, և կրտսի, ընդ հրամանատարութեամբ Ռուսական ծովակալ Ալէքսիէֆի:

"A LOST ART."

Անունն է այս գրքոյն՝ որուն երեւումը մեծ գովեստով հաջողութեամբ ան զանազան մամուլին կողմէն. կը խօսի Արեւելեան Գորգերու վրայ ընդհանուր կերպով, ինչպէս նաև անանձին անանձին կը բացատրէ գանձախն անուններով ճանչցուած գորգերը: Ամենայարմար ընծայ է ձեր Ամերիկացի բարեկամաց, որոնք Արեւելեան գորգեր ունին իրենց առանձնու մէջ:

Գինը 30 Սէնթ

Գինը 2 Էդինսի կը հասցէին. ARDASHES H. KELEIAN, With L. S. Ayres & Co., Indianapolis, Ind.

Ա Ջ Դ

Նիւ-Եորքի Հայ. Մարզ. Կաճառը իւր Ուէսթ Հոպօքընի մասնաճիւղով միասին միանալով Փաթրիքի Հայ. Գաղթ Միութեան հետ. մեծ դաշտային հանդէս մը պիտի տան Սեպ. 16 ին կիրակի օրը Ֆրանսիոյ Բարք. Ուէսթ Հոպօքընի Գանձախու մը:

Ա Ջ Դ

Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ: Պոթոնի թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԵՆԵՐ ՉԱՓԱՆՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով:

ՅՈՎ ՀԱՆԵՆՏՍ ՍՍՄՈՒԷԼԵԱՆ ԱՐԱՄ ԱՍԳԱՆԱՋ

Մեր Հասցէն է Tyler Grocery Co. 113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիգրիսի Բաքիթիկէտ մասնաւոր կարգադրութիւնը բրած են ուրիշ գրատուներէ ալ գրքերը բերել տարւո միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ գրատէր Հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ բերել տալու պատրաստ են: Քիչ ժամանակի վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրքանց շարք մը: Փափաքողաց գրացուցակ կը զըրկուենք: Մեծ քանակութեամբ գրքանցներու մասնաւոր գնով կը ընենք:

Գինը 10 ՊԵՏԻՇԵԱՆ 390 P O Box LOWELL MASS

231 Իսթ 28 րդ. Փողոց ՆԻՒ-ԵՈՐԿ

Մ. Գաղանձեան և Պ. Մուշեղեան:

Կը վաճառենք տեղական ու արևելեան ամէն անակ նպարեղէններ. Հօլսթիլի գնով. զիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ: Հուսով կը զրկենք ուր որ ուզուի:

Ահա մեր գններուն ցանկը իւրաքանչիւր փառնա սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուստրի պուրջուր շատ մաքուր 3 1/2. Հայկական պանիր 10. Լօքուժ շեքերի 10. Շամ ֆասիլի 26. Պամեայ 28. Ճերմակ ֆասիլի 5. Նուշ 18. Չամիչ 8. Սալոր 5. Պայի 15. Ընկոյզ 14. Յնախ 13. Պուրմա 5. Լեպլեպուր շաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիսառ 5. Գառնի միս տեղս մորթած 7. Պայսերի պատրամայ և Սուճուր 35. Թէ ալի և թէ անլի իւզ 15. Լեպլեպուր ամենալաւ 28. սէնթ ամէն մէկ փառնա: Ունինք նաև Բիմիս. Չաման. Տարչին. Լեմոն թուղի և տեղական ապրանք ամէն տեսակը:

Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՆՈՒՄԱՆԻ «Ազգայնացի մէջ ընթերցանութիւն տարածել» Գրադրանի նպատակը լինելով, ի գիտութիւն նոր կարգալ (և մասնաւորապէս անոնց որ չ'կրցինք զրկել զըրգերը. մեր քով սպասած ըլլալուն համար) սովորողներու կը յայտարարենք թէ՛ նոր ստացեր ու կը վաճառենք. Ընթերցարան (Մամուրեանի) նոր Ընթերցարան (Պոնտուգեանի) Մամուրեանի Պարտեզ (Պալապանի) Մայրենիքը (Ա. և Գ. տարի) և Այրենարան:


Նաև կը վաճառէ՝ Ազգային Երգարան՝ Հայկական Չինուշան, Հին և Նոր Արանց, Սասնոյ և Կ. Պօլսոյ Չարդերու լուսանկարները: — Կանխիկ վճարելի:

Գինը վարչութեան հետեւալ հասցէով: ԳՐԱՆՈՒՄԱՆ ԲԻՍՆԵՍ ԱՐՄ. LIBRARY, 63 Laurel Street, Worcester, Mass.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գիտական և Գրական (Ամսաթերթ) Իր անունին համեմատ Գրական և Գիտական ամէն կարգի խնդրոց վրայ գեղեցիկ ուսումնասիրութիւններ կը պարունակէ, Հայ ընթերցասիրաց առձեռն համալսարան մը ըլլալու հաւատարմ կուտայ:

Տնօրէն. Սմբագիրներ Մ. Պաղտատարեան և Յովհ. Շաւարշ ՀԱՄԱՍԱՐԱՆ, 4, rue Ortolan 4, (Place Monge) Paris.



THOMAJANIAN BROTHERS, 52 Southbridge St., Worcester, Mass.

Ամերիկայի Հայ գաղթականութեան կողմէ յայտարարել, ամէն դիւրութիւն կը ընծայենք նաեւ տոմսակ տարու մասին. դէպի թուրքիա կամ Եւրոպայ. մասնաւորապէս կը յանձնարարուիք (Յրէնչ Լայն) կողմէ դիմել որ ամենապատուական և ամենաարագ նաւերը ունի և ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կը ինն Նիւ-Եորքէն: Նաև դրամ կը փոխարենք Մարսէյի հեռագրաւ թէ նամակաւ. նոյնպէս Եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքները, որք կը գանձուին առանց որ և է ծախուց և դժուարութեանց մեր տան ապահովութեան մասին հարեակիցք արդէն տեղեակ են անցեալ 10 տարուան մեր ընթացքին: Նաև Կենաց, Վերադարձուելու ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըտանցեալ եմք. ասոր համար այ օտարներու դիմելէ առաջ մեզի դիմեցէք. նամակներու պատասխանները մեր անմիջական ուղարկութեանը կուտամք ինչպէս սովորութիւն է:

ՀԳԵՍՏԱՎԱՃԱՌ, ԵՂՐԱՐԻ ԹՈՎՄԱՃԱՆԵՆՆԸ 52 Սաւոթ Գրիւ. Փողոց Ուստր Մէս 3 տարի Ապրանք գնողաց ալ լուսանկարը մեծցնել կուտամք ձրի:

Բ Ա Յ Յ Ի Ի

«ԴԱԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ. Հատոր վերջարանով և «ԿԱՅՍԵՐ» Բ. Հատոր լիակատար:

Իւրաքանչիւր բաժանորդագիրն է 5 Շիլին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ՍՍՄՈՒԷԼ» եղաւ:

Բաքիթի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղարկուի դիմել մեզ: Մեզինք կարելի է տանալ նաև Նիւ-Եորքի Հայրենիքի, Մերենցի, Պարոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրատուներէ:

MME. RAFFI, 17 Uxbridge Road, London, W., England.

«ՀԱՆԴԵՆՍ ՍՄՍՕՐԵԱՅ»

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ Տարեկան բաժնեգիրն է՝ 10 Ֆրանկ. (2 Տօլար) Գինը՝ Հետեւալ հասցէին:

A la Redaction de La Revue «Hantes», Vienne (Autriche) VI 1/2 Mechitharistengasse 4.

Ա Ջ Դ

ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուստրի մէջ կրկին տարիներէ ի վեր հաստատուած ենք մեր յատուկ պուրջուր գործարանը: Մոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենալաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուրջուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն՝ տանտիրներուն և ճարտնապետներուն զնախառնութեան արժանապատէ է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծծած և կորկոտ:

Ուստրի ամեն ով որ կուզէ ընտիր և արտոժահամ կերակուր լինելու պուրջուր և ծծած ունենալ, թող զիմէ ուղարկուի մեզ: Ապագանքներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զիմել հետեւալ հասցէին:

Ուստրի, Պուրջուրի Միացեալ Ընկ. 151 Իւնիոն սթ., Ուստր Մաս. Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը յայտենք:

Անձնական և Շահաւոր Գործ Վեց տարիներէ ի վեր շարունակած փայտի գործս կը ծախեմ խիստ յարմար և դիւրամտացիլ գնով, գործանոցս կը գտնուի 391 Յատնութէն փողոց Փրոպիտէնս:

Աւելորդ է ըսել թէ անձնական գործի փափաքողներու համար հազուադէպ պատեհութիւն է: Գինը առ ԱՀարն Իշխանեան

ԱՆԱՀԻՏ

Հանգէս Աղգային, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵՆՆԸ 6 Place de L'odeon Paris



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ ՄԵՍՍՐԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՐԱՆԱԿ Ս. ՏԱՄՊՈՒՐԱՅԵՆՆԸ

Նիւ-Եորք 509 2 րդ. Ալլինօ

Տեղական և Արեւելեան բազմաանակ նպարեղէններ, լաւագոյն տեսակ ընթերցաններ, եղանակին համեմատ բանարեղէններ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիր փառնա 12 սէնթ, մեծ քանակ գնողաց 10 սէնթ: Ուստրի պատեհական Պղլուր և Մեծած փառնա 4 սէնթի մեծ քանակ գնողաց 3 1/2:

Ձիթապտուղ (զէյթուն) փառնա 10 ս. մեծ քանակ գնողաց մասնաւոր զիջել կընեմ, 5 փառնա թէն սալայի հատը 26 սէնթ մեծ քանակ գնողաց 20 սէնթ հատը: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, աղը դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալլախ, կանանչ զէյթուն. Ձէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մաքուր 1 շօքում տեսակներովը, սպա աղը զուած կամ շաղցուած, սուճախ, սիսեռ Պօլսոյ խաշար պանիր, լէպլեպուր շաքարի տեսակներով. քիմիոն, անասն, պատու տեսական իտենի. աղոտ ալլուրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով եղած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձով կը կատարենք մեր յատուկ կառքով: վճարու մեքը կանխիկ են և ոչ ապառիկ:

Նաև կը ծախեմ Կամիեա, ինչպէս իր Պատրմա և Մուճուղ:

ԿԱՐԻՈՐ ԱՋԴ

Ճաշակի, յարմար պատուական ապուխտ (Նայսերի Պատրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փառնա 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղիէն:

S. ՍԷՄԵՐՃԵԱՆ 113 TYLER ST BOSTON MASS